



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N 11-1/755-12

31. 01. 2012 թ.

<Ռեմզոն> ՍՊԸ տնօրեն  
պարոն Հ.Շահնազարյանին  
հասցե՝ ք.Երևան, Էմինի 7, 29  
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ  
պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է Ձեր 28.12.2011թ-ի գանգատի վերաբերյալ ՀՀ  
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի  
գանգատարկման հանձնաժողովի 24.01.2012թ. թիվ 3/4 որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/4

24 հունվարի 2012թ.

Քննարկվեց <Ռեմզոն> ՍՊԸ 28.12.2011թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության 10.10.2011թ-ի թիվ 1202130 արձանագրության դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.09.2011թ-ի թիվ 1202130 հանձնարարագրի <Ռեմզոն> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 10.10.2011թ-ին կազմվել է թիվ 1202130 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է հետևյալը:

<Ռեմզոն> ՍՊԸ-ի ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին վերաբերող ձեռքբերումների գծով 2011թ-ի օգոստոս ամսին ընկերության կողմից իրականացված գործարքների մասով դիմումով վերադարձման (հաշվանցման) ներկայացված ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 3.980.910 դրամ: Համաձայն Կենտրոնի ՀՏ հետ կնքված փոխադարձ հաշվարկների ստուգման ակտի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 09.09.2011թ. դրությամբ կազմում է 10.344.397 դրամ:

Կատարած ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից իրականացված, <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջներին համապատասխան իրացման շրջանառությունը 2011թ-ի օգոստոս ամսին կազմում է 19.904.550 դրամ: Համաձայն ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար ընկերության կողմից ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը կազմում է 4.213.823 դրամ: <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և 26-րդ հոդվածի 2-րդ կետի հաշվարկվում է լրացուցիչ ԱԱՀ գումար՝ 3.980.910 դրամի չափով: Նույն օրենքի 43-րդ հոդվածի համաձայն գանձվում է պակաս ցույց տրված 3.980.910 դրամի ԱԱՀ-ի գումարները, ինչպես նաև սուգանք այդ գումարի 50%-ի չափով՝ գումարով 1.990.455 դրամ, ընդամենը 5.971.365 դրամ:

Այսպիսով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 3.980.910 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը ենթակա չէ վերադարձման (հաշվանցման):

<Ռեմզոն> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Հոկտեմբերի 10-ին կազմվել է թիվ 11202130 <հարկային հաշվանցածների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրության> արձանագրություն, որում մասնավորապես նշվել է, որ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 7 հոդվածի 15-րդ կետի և 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն հաշվարկվել է լրացուցիչ ԱԱՀ գումար՝ 3.980.910 դրամի չափով, ինչպես նաև գանձվում է սուգանք այդ գումարի 50%-ի չափով՝ 1.990.455 դրամ, ընդամենը՝ 5.971.365 դրամ: Վերջինիս հետևանքով ընկերության անձնական հաշվառման քարտից ԱԱՀ-ի դեբետային մնացորդից պակասեցվել է 5.374.2 հազ. դրամ, ինչպես նաև հաշվարկվել է տույժ չվճարված մասի վրա 33.4 հազ. դրամի չափով:

Սակայն արձանագրման պահին ընկերության կողմից արդեն իսկ ներկայացվել էր ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, որի հետևանքով արձանագրությամբ սահմանված տուգանքը չի կարող առաջանալ, քանի որ.

հարկային մարմինների կողմից ուսումնասիրվող կամ արդեն իսկ ուսումնասիրված հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողների կողմից ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ ներկայացնելու մասով օրենքով սահմանափակումներ սահմանված չեն:

Մասնավորապես, <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկներ չեն կարող ներկայացվել օրենքի 29-րդ հոդվածով սահմանված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ճշգրտված հաշվարկները վերաբերվում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստագված հաշվետու ժամանակաշրջաններին:

Քարտավարի կողմից թիվ 1202130 արձանագրության արդյունքներն ընկերության անձնական քարտում ձևակերպելու հետևանքով խախտվել են ընկերության գույքային իրավունքները:

Ընկերությունը խնդրում է անձնական քարտում վերականգնել ԱԱՀ-ի դեբետային մնացորդը, քանի որ վերը նշված ճշգրտված հաշվարկով արդեն իսկ պակասեցվել է այն, իսկ սուգանքի նվազեցումը վերականգնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.09.2011թ-ի թիվ 1202130 հանձնարարագրի ընկերությունում կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.09.2011թ-ի թիվ 1202130 հանձնարարագիրն ընկերությանն է ներկայացվել և փաստացի ուսումնասիրությունը սկսվել է 03.10.2011թ-ին: Ուսումնասիրության հաջորդ օրը՝ 04.10.2011թ-ին, ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով հարկային տեսչություն ներկայացվել է ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկ, որով պակասեցվել է ԱԱՀ-ի դեբետային շրջանառությունը՝ գումարով 4008522 դրամ: Այսինքն, ընկերության կողմից մինչև 10.10.2011թ-ի թիվ 1202130 արձանագրության կազմելը, ըստ էության, կատարվել է վերջինով արձանագրված խախտումների ուղղում (ճշգրտում):

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. <ԱԱՀ վճարողների կողմից ԱԱՀ-ի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշգրտված հաշվարկներ և (կամ) սույն օրենքի 20 հոդվածով սահմանված տեղեկությունների ճշգրտումներ (ճշգրտված տեղեկություններ), բացառությամբ սույն օրենքի 29 հոդվածով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ճշգրտված հաշվարկները և (կամ) տեղեկությունները վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին>:

Քննարկվող դեպքում ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկն ընկերության կողմից ներկայացվել է ուսումնասիրովող (այլ ոչ թե ստուգվող) հաշվետու ժամանակաշրջանի համար, հետևապես <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկների ներկայացման համար սահմանված սահմանափակումը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնների և վերահսկողության վարչության 10.10.2011թ-ի թիվ 1202130 արձանագրությունը:

Հանձնաժողովի



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ